ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Երկու հազար տասներկու թվականի փետրվարի քսանին

ք.Երևան

Մենք՝ քաղ. Վահագն Դանիելի Գրիգորյանս, ծնված՝ 19.03.1979թ., անձնագիր՝ [redacted] տրված 14.09.2006թ. 041 կողմից, հաշվառված՝ Երևան Դավիթ-Բեկի 9շ., բն.48, որ գործում եմ Ռուբիկ Նորիկի Դազարյանի և Սոնա Սամադի Խուդավերդյանի անունից լիազորագրով, հաստատված ՌԴ Ալտայի երկրամաս Բարնաուլ քաղաքի նոտար Ալեքսանդր Եվգենիի Տարասովի կողմից 27.01.2012թ., գրանցամատյան 1C-209, հետագայում՝ «Վարձատուներ» և ՆՈՏԱՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ ոչ առևտրային կազմակերպությունը, վկայական՝ 03Ա059706, ի դեմս նախագահ Ալվարդ Պարգևի Մելքոնյանի, անձնագիր՝ [redacted] տրված 09.03.2011թ. 001 կողմից, հաշվառված՝ Երևան Արաբկիր 17 փող. տուն 8, հետագայում՝ «Վարձակալ», կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ վարձատուները պարտավորվում են վարձակալի ժամանակավոր տիրապետմանն և օգտագործմանն հանձնել 1.2 կետում նշված գույքը, իսկ վարձակալը պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

1.2. Վարձատուները Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն են հանձնում քաղաք Երևան Կենտրոն, Ալ.Մանուկյան փողոց, թիվ 8/1 /ութ կոտորակ մեկ/ շենք /կառուցվող շենքի 1-ին հարկի տարածք/, որը բաղկացած է՝ 131.15 /հարյուր երեսունմեկ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական/քմ. ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող մակերեսից: *Շինության ծածկագիրը՝ 01-006-0214-0225-001-054*, այսուհետ՝ «Գույք»:

1.3. Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուներին սեփականության վկայական N2601061 տրված 28.04.2009թ. և այն ազատ է երրորդ անձանց իրավունքներից (այլ անձանց վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում), որը հաստատված է << Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևան տարածքային ստորաբաժանման «Կենտրոն» սպասարկման թիվ 1 գրասենյակի կողմից 13 փետրվարի 2012թ. տրված ՍՏ-13022012-01-0102 միասնական տեղեկանքի */Տարածքի ավարտվածության աստիճանը՝ 50-80% է; Սեփականատիրոջ բաժնեմասը 0.08649հա հողամասի, ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ կազմում է 131.15/8180.3; Առկա է 628.8քմ. մակերեսով ընդհանուր աստիճանավանդակ; Շինության նախկին ծածկագիր՝ 01-006-214-225-001-010/:*

1.4. Սույն պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով:

1.5. Վարձավճարի չափը յուրաքանչյուր ամսվա համար կազմում է 300.000 /երեք հարյուր հազար/ դրամ: Առաջին 6 /վեց/ ամսվա վարձավճարը 1.800.000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ դրամը վճարվում է պայմանագրի կնքման պահին:

1.6. Յուրաքանչյուր ամսվա վճարումը կատարվում է մինչև հաջորդ ամսվա 05-ը:

1.7. Կողմերը ցանկացած ժամանակ կարող են հրաժարվել պայմանագրից 30 /երեսուն/ օր առաջ գրավոր ծանուցելով միմյանց այդ մասին

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

Վարձատուներն իրավունք ունեն՝

2.1 Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.2 Վարձակալից պահանջել Գույքը պահել սարքին և պատշաճ վիճակում և վերադարձնել սույն պայմանագրի 1.1. կետում նշված վիճակում:

Վարձատուները պարտավոր են՝

2.3 Գույքը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո 1 /մեկ/ օրվա ընթացքում, ընդ որում, գույքի ընդունման պահին կողմերը կազմում են ընդունման-հանձնման ակտ:

2.4 Գույքը տրվում է վարձակալին իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:
2.5 Վարձակալը իրավունք ունի Գույքը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուների գրավոր համաձայնությամբ:
2.6 Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում և դրա բոլոր պատկանելիքներով ու իրեն վերաբերող փաստաթղթերով:
2.7 Վարձակալին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին:
2.8 Վարձակալին զգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավ, սերվիտուտ և այլն) մասին:

Վարձակալը պարտավոր է՝

2.9 ժամանակին վճարել վարձավճարը
2.10 Գույքը պահպանել սարքին վիճակում և օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:
2.11 Կատարել Գույքի կապիտալ վերանորոգումը միայն վարձատուների համաձայնությամբ:
2.12 Վճարել իր օգտագործած էլեկտրաէներգիայի, ջրի, հեռախոսի, գազի, այլ կոմունալ ծախսերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկային պարտավորությունները:

Սույն պայմանագրի կնքման հետ կապված պետ. տուրքի վճարումը կատարվում է Վարձակալի կողմից:

Սույն պայմանագիրը կնքված է 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Կողմերի հասցեները և վավերապայմանները

«Վարձատուներ»

լիազորված անձ
Վ.Դ.Գրիգորյան

«Վարձակալ»

ՆՈՏԱՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
ոչ առևտրային կազմակերպության
նախագահ՝ Ա.Պ.Մելքոնյան

Երկու հազար տասներկու թվականի փետրվարի քսանին պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար՝ Էմմա Շաբոյանիս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը և գործունակությունը ստուգված են:
ՀՀ Քաղ-օր-ի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում
Գրանցված է գրանցամատյան N 1191

Գանձված է պետական տուրք
և ծառայության վճար համաձայն
ՀՀ «Պետական տուրքի մասին»
և «Նոտարի մասին» օրենքների

Նոտար՝ _____ Է.Շաբոյան